ՈՒԵՖԱ/ՀՖՖ ՊՐՈ ԿԱՐԳԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԴԱՍԸՆԹԱՑ

Դիմելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և նյութերի ցանկ

Կարևոր. ՈՒԵՖԱ Պրո կարգի դասընթացին դիմելու համար անհրաժեշտ է ունենալ ՈՒԵՖԱ Ա կարգի վավեր արտոնագիր և այն ստանալուց հետո՝ առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ՝ որպես Մ-17 կամ ավելի բարձր տարիքային խմբի պատանեկան կամ երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ, Առաջին խմբում հանդես եկող թիմի գլխավոր կամ օգնական մարզիչ, կամ Բարձրագույն խմբում հանդես եկող թիմի օգնական մարզիչ:

Առցանց դիմում-հայտը լրացնելիս անհրաժեշտ է կցել հետևյալ փաստաթղթերն ու նյութերը:

Պարտադիր փաստաթղթեր

1. Անձնագրի՝ անձնական տվյալները պարունակող էջի կամ նույնականացման քարտի (ID քարտ) երկու կողմերի ընթեռնելի սկանավորված պատճենը:
2. Հանրային ծառայությունների համարանիշի (սոցիալական քարտի) սկանավորված պատճենը:
3. 3×4 չափսի լուսանկար:
4. Առողջության վերաբերյալ բժշկական տեղեկանքի սկանավորված պատճենը՝ տրված դիմում-հայտը ներկայացնելու օրվան նախորդող մեկ ամսվա ընթացքում:
5. Դատվածություն չունենալու վերաբերյալ տեղեկանքի սկանավորված պատճենը՝ տրված դիմում-հայտը ներկայացնելու օրվան նախորդող մեկ ամսվա ընթացքում:
6. ՈՒԵՖԱ Ա կարգի վավեր արտոնագրի սկանավորված պատճենը:
7. Տեղեկանք, որը հաստատում է, որ դիմորդը ՈՒԵՖԱ Ա կարգի արտոնագիրը ստանալուց հետո ունի առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ՝ որպես Մ-17 կամ ավելի բարձր տարիքային խմբի պատանեկան կամ երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ, Առաջին խմբում հանդես եկող թիմի գլխավոր կամ օգնական մարզիչ, կամ Բարձրագույն խմբում հանդես եկող թիմի օգնական մարզիչ: Տեղեկանքում պետք է նշվեն թիմը, պաշտոնը, աշխատանքի ժամանակահատվածը և մրցակցային մակարդակը:

Ընդունելության փաթեթ

8. Մարզչական ինքնակենսագրական (CV)՝ ներառելով թիմերը, պաշտոնները, աշխատանքի ժամանակահատվածները, մրցակցային մակարդակը, կրթությունը և մասնագիտական վերապատրաստումները:
9. 3-5 րոպե տևողությամբ ներկայացման տեսանյութ, որտեղ դիմորդը ներկայացնում է դասընթացին դիմելու շարժառիթը, մասնագիտական նպատակները, մարզչական փիլիսոփայության հիմնական սկզբունքները և զարգացման կարիքները, որոնց վրա ցանկանում է աշխատել Պրո կարգի դասընթացում:
10. Սեփական մարզչական աշխատանքի վերլուծական պրեզենտացիա՝ 8-10 սլայդի ծավալով: Իրական թիմի հետ աշխատանքից մեկ օրինակի հիման վրա դիմորդը ներկայացնում է թիմի համատեքստը, խաղային հիմնական սկզբունքները, դրանց իրականացման մարզումային մոտեցումը, մարզչական շտաբի հետ համագործակցությունը և սեփական որոշումների գնահատումը: Պրեզենտացիան պետք է ներառի մեկ կոնկրետ խնդիր, դրա լուծման համար կայացրած որոշումը, արդյունքը և վերլուծություն, թե այսօր ինչ կաներ այլ կերպ:

Առկայության դեպքում ներկայացվող լրացուցիչ փաստաթուղթ

11. Աշխատանքի վայրից տեղեկանքի սկանավորված պատճենը, եթե դիմորդն աշխատում է:

Գործնական աշխատանքի հնարավորության հաստատում

Դիմորդը գործնական առաջադրանքները կատարելու հնարավորությունը հաստատում է առցանց դիմում-հայտում՝ նշելով թիմի անվանումը և թիմում իր կարգավիճակը կամ նախատեսվող ներգրավվածությունը: Գործնական առաջադրանքները կատարելու հնարավորության վերաբերյալ առանձին տեղեկանք դիմելու փուլում չի պահանջվում: Աշխատող դիմորդները ներկայացնում են աշխատանքի վայրից տեղեկանք՝ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին համապատասխան: Անհրաժեշտության դեպքում՝ մինչև վերջնական ընդունելությունը, ՀՖՖ-ն կարող է պահանջել թիմի գրավոր հաստատումը:

Նշում. Փաստաթղթերի և նյութերի ներկայացման ձևաչափը, լեզվական պահանջները և այլ մանրամասներ սահմանվում են տվյալ դասընթացի ընդունելության հայտարարության և առցանց դիմում-հայտի մեջ: Անհրաժեշտության դեպքում ՀՖՖ-ն կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր: